

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՀԱՐ ՎԱԶԳԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ ԱՇՈՏ ԵՐՁԱՆԻԿԻ
ՈՍԿԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի մայիսի 10-ին, ժամը 14.00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող., 74

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի ապրիլի 7-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ



Վ. Ս. ԱՎԵՏԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Գյուղատնտեսությունը, հանդիսանալով տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, միաժամանակ տնտեսական գործունեության ամենառիսկային ոլորտներից է: ՀՀ-ում գյուղատնտեսությունն ունի ռազմավարական նշանակություն: Բավական է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում վերջին տարիների վիճակագրական տվյալներով կազմում է 19.7%, բնակչության 36.5%-ը ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների շուրջ 34%-ը: Այս ամենով հանդերձ, գյուղատնտեսությունը գրեթե ամեն տարի հսկայական վնասներ է կրում տարատեսակ ռիսկերի, մասնավորապես տարերային աղետների հետևանքով (կարկտահարություն, ցրտահարություն, փոթորիկ, երաշտ և այլն), ինչը խոչընդոտում է ոլորտի կայունությանը և զարգացմանը: Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների գույքային շահերի պաշտպանությունը և գյուղատնտեսական ռիսկերի կառավարումը ոչ միայն տնտեսավարողների, այլև ամբողջ հասարակության և պետության խնդիրն է: Խնդրի լուծման տարբերակների որոշումը եղել և շարունակում է մնալ գիտնականների, պետական կառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

ՀՀ կառավարությունը համապատասխան միջոցառումներ է իրականացնում տարերային աղետների կառավարման, ինչպես նաև դրանցից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցելու ուղղությամբ (հակակարկտային կայանների, կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, հետադետային օգնությունների տրամադրում և այլն): Սակայն ռաուժանասիրությունները վկայում են, որ այդ միջոցառումների ազդեցության արդյունավետությունը դեռևս այնքան էլ բարձր չէ, և անհրաժեշտություն առաջանում կիրառել գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այլ գործիքներ:

Վերջին ժամանակաշրջանում հաճախ է քննարկվում ապահովագրության միջոցով գյուղատնտեսական ռիսկերի կառավարման հարցը: Օտար և հայազգի շատ տնտեսագետներ իրենց աշխատություններում անդրադարձել են գյուղատնտեսության ապահովագրության դերին, իրականացման առանձնահատկություններին, ապահովագրական պրոդուկտներին, պետական աջակցության ձևերին: ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական որոշ ծրագրեր իրականացվել են, սակայն շարունակական բնույթ չեն կրել և դրանք կարելի է ձախողված համարել:

Գյուղատնտեսության ապահովագրությունը, որպես ռիսկի կառավարման գործիք, իրականացվել է դեռևս 17-րդ դարում Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այսօր այն կիրառվում է ավելի քան 100 երկրում, ընդ որում՝ տնտեսապես զարգացած երկրներում գործում են գյուղատնտեսության ապահովագրական բավականին արդյունավետ և կայուն համակարգեր, մինչդեռ զարգացող երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում է ընդամենը փորձական եղանակով և ունի մի քանի տարվա պատմություն: Ներկայումս ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրական համակարգն

ընդհանրապես բացակայում է, որն անդրադառնում է գյուղացիական տնտեսությունների կայունության, եկամուտների, արտադադրի և գործազրկության մակարդակների վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել գյուղատնտեսության ապահովագրության ներդրման նոր մոտեցումներ, ամփոփել գիտական հետազոտությունների արդյունքները, ուսումնասիրել գյուղատնտեսության ապահովագրության ինովացիոն պրոդուկտները, մշակել ՀՀ-ում ապահովագրական համակարգի ներդրման գործուն կառուցակարգեր և կատարել դրանց կիրառման գործնական քայլեր: Այս ամենը պայմանավորել են ատենախոսության թեմայի արդիականությունը, կատարման անհրաժեշտությունը, հետազոտության առարկան, նպատակը, մեթոդաբանությունը, շարադրման կառուցվածքն ու տրամաբանությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսությունն է և ապահովագրական համակարգը, իսկ առարկան՝ ՀՀ-ում պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման կառուցակարգերն ու դրանց ձևավորման ուղիները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է առաջարկել գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման գիտականորեն հիմնավորված կազմակերպատնտեսական միջոցառումների ցանկ և հայեցակարգային մոտեցումներ, ինչպես նաև պետական աջակցության կառուցակարգեր, որոնք կիրառելի կլինեն հայաստանյան ներկայիս պայմաններում: Սույն նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գյուղատնտեսության ապահովագրության տեսական, մեթոդական հիմունքները, առանձնահատկությունները, պետական աջակցության ձևերը, ավանդական և ինովացիոն պրոդուկտները,
- ուսումնասիրել գյուղատնտեսության ապահովագրական համակարգի զարգացման միջազգային փորձը, իրավական հիմքերը,
- բացահայտել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ռիսկերը և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները,
- վերլուծել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման ձեռնարկումները, նախադրյալներն ու խոչընդոտող գործոնները,
- մշակել կազմակերպատնտեսական, մեթոդաբանական առաջարկություններ և պետական աջակցության կառուցակարգեր ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայ և օտարազգի գիտնականների աշխատանքներն ու հետազոտությունները, հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, Համաշխարհային բանկի, Եվրամիության, միջազգային վերաապահովագրական ընկերությունների և այլ կառույցների կողմից հրապարակված նյութերը, հաշվետվությունները և գիտամեթոդական մշակումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեգրքերը, զեկույցները, միջազգային գիտաժողովների նյութերը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական նյութերը, ծրագրերը և հաշվետվությունները, ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան կանոնակարգերը, ինչպես նաև ոլորտին վերաբերող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը և ուղեցույցները:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսական վերլուծության հիմնական եղանակներն ու մեթոդները, մասնավորապես՝ համադրման, վիճակագրական, տրամաբանական, սոցիոլոգիական հարցման, հարցում-դիտարկումների մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսությունում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք արդյունքների, որոնցից գիտական նորույթ են դիտարկվում հետևյալները.

- մշակվել են ՀՀ-ում պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման համար անհրաժեշտ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հիմնական դրույթները,
- հիմնավորվել է անվանական ռիսկից մշակաբույսերի ապահովագրության և ինդեքս ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը ՀՀ գյուղատնտեսությունում և մշակվել են այդ պրոդուկտների կիրառման միջոցառումները,
- մշակվել են ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման պետական աջակցության հիմնական ուղղությունները և գյուղատնտեսության ապահովագրություն իրականացնող առաջարկվող կառույցի կառուցվածքն ու գործառույթները:

Հետազոտության գիտագործնական նշանակությունը և կիրառումը: Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտությունների հիման վրա մշակվել են մի շարք գիտագործնական բնույթի առաջարկություններ պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման կառուցակարգերի ձևավորման ուղղությամբ, որոնք կարող են կիրառական նշանակություն ունենալ ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հադիսանալ ագրարային քաղաքականության, ռազմավարական ծրագրերի, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության պրոդուկտների մշակման համար: Ատենախոսության որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել պետական կառավարման մարմինների, գյուղատնտեսության բնագավառի մասնագետների, ապահովագրական ընկերությունների աշխատակիցների, գիտաշխատողների և ուսանողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային քաղաքականության և խորհրդատվության, Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման, Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնների համատեղ նիստում, ՀԱԱՀ ամենամյա միջազգա-

յին գիտաժողովներում (2013թ., 2014թ. և 2015թ.), Երևանի պետական համալսարանում կազմակերպված ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ և 4-րդ գիտաժողովներում, ՀԱԱՀ-ի Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնում: Քննարկումներ են կազմակերպվել նաև ՀՀ ապահովագրական շուկայի և գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային փորձագետների շրջանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը՝ ներառյալ գրականության ցանկը, կազմում է 144 համակարգչային էջ, այն ներառում է 14 աղյուսակ և 11 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության ապահովագրության տեսական և մեթոդական հիմունքները» գլխում ներկայացվել են ապահովագրության տնտեսական էությունը, գործառույթները, գյուղատնտեսության ապահովագրության զարգացումն ու առանձնահատկությունները, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրական շուկայի կայացման մեթոդաբանությունը:

Ապահովագրությունը մարդկանց միջև առաջացող հասարակական, տնտեսական հարաբերությունների հնագույն կատեգորիա է, որն արտադրական հարաբերությունների անբաժանելի մասն է: Ապահովագրությունը ռիսկի կառավարման մեթոդներից է: Ռիսկի կառավարումը ներառում է երեք փուլ՝ ռիսկի գնահատում, ռիսկի կանխում, ռիսկի փոխանցում: Ապահովագրությունն առնչվում է նշված բոլոր փուլերի հետ:

Ապահովագրական ընկերությունները ֆինանսական համակարգի կարևորագույն մասնակիցներն են, որոնց շնորհիվ ապահովվում է նրա բնականոն գործունեությունը: Առանձնացնում են ապահովագրության չորս հիմնական գործառույթ՝ ռիսկային, նախագուշացման, խնայողության-կուտակային, վերահսկողության:

Ագրարային ոլորտում ապահովագրությունը կիրառվել է դեռևս այն ժամանակ, երբ դրամական հարաբերությունները ձևավորված չէին: Ապահովագրական ֆոնդը կազմավորվում էր բնեղեն եղանակով: Գյուղատնտեսության ապահովագրության իրականացման ամենահին ձևը փոխադարձ ապահովագրությունն է, որը մինչ օրս էլ կիրառվում է շատ երկրներում: Փոխադարձ ապահովագրության հիմնական նպատակը ոչ թե շահույթի

ստացումն է, այլ՝ իր անդամներին լավագույն ապահովագրական պաշտպանվածության տրամադրումը: Այս դեպքում որպես ապահովադիրներ հանդես են գալիս փոխադարձ ապահովագրական ընկերության հիմնադիրները, որոնք էլ մշակում են ապահովագրության կանոնները: Գյուղատնտեսության ապահովագրության ամենահին և ներկայումս էլ տարածված պրոդուկտներից է անվանական կամ մեկ ռիսկից ապահովագրությունը, որը կիրառվել է հիմնականում հացահատիկային մշակաբույսերի, պտղատու այգիների, ինչպես նաև կենդանիների, անտառների և ջերմոցների ապահովագրության համար:¹ Կարկուտից մշակաբույսերի ապահովագրություն իրականացվել է արևմտյան Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում, որտեղ 1791թ. կնքվել է կարկուտի ռիսկից ապահովագրության առաջին պայմանագիրը:² Այնուհետև այս պրոդուկտը լայն կիրառություն է ստացել նաև ԱՄՆ-ում: Բազմակի ռիսկերից բերքի ապահովագրություն իրականացվել է 1950-80-ականներին Լատինական Ամերիկայում (Բրազիլիա, Կոստա Ռիկա, Էկվադոր, Մեքսիկա) և Ասիայում (Հնդկաստան), որը հիմնականում կապված էր փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի հետ: Խորհրդային Միությունում պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում էր պարտադիր եղանակով «Պետապ»-ի կողմից և տարածվում էր պետության սեփականություն հանդիսացող կոլեկտիվ տնտեսությունների վրա:

Գյուղատնտեսության ապահովագրությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված են դրա ներդրման դժվարությունները և պետական աջակցության անհրաժեշտությունը: Այսպես, գյուղատնտեսության ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում հիմնականում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը և կենդանիները, որոնք անընդհատ գտնվում են աճի ու զարգացման գործընթացում: Ագրոապահովագրության իրականացման համար անհրաժեշտ են մասնագետներ, որոնք տիրապետում են ոչ միայն ապահովագրական, այլև գյուղատնտեսական գիտելիքների: Գյուղատնտեսության ապահովագրությունը բախվում է տեղեկատվական անահամաչափության վտանգի հետ, որը դրսևորվում է անբարենպաստ ընտրանքի և ապահովադիրների անբարեխիղճ վարքագծի ձևով: Մասնավոր ընկերության համար բավականին բարդ է հավաքագրել անհրաժեշտ, ամբողջական և հավաստի տվյալներ, իրականացնել ռիսկերի գնահատում, կանխատեսել ապահովադիրների վարքագիծը, մշակել և իրականացնել անդերայթինգային քաղաքականություն: Գյուղատնտեսական ռիսկերին բնորոշ է սիստեմատիկ բնույթը. այսինքն դրանց տեղի ունենալու արդյունքում և՛ վնասված տարածքներն են հսկայական, և՛ առաջացած վնասները: Սա է հիմնական պատճառը, որ մասնավոր ապահովագրողները խուսափում են կնքել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրեր: Ապահովագրության այլ տեսակների հետ համեմատած գյուղատնտեսության ապահովագրության դեպքում բարձր են գործավարման ծախսերը, ինչը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեության աշխարհագրական ցրվածությամբ: Գյուղատնտեսության ապահովագրության ռիսկայնության և գործավարման

¹ Ramiro Iturrioz, Agricultural Insurance, The World Bank, 2009.- p. 6-8

² <http://www.fao.org/docrep/008/y5996e/y5996e03.htm#TopOfPage>

ծախսերի բարձր մակարդակները հիմք են հանդիսանում բարձր ապահովագրավճարների սահմանման համար և առանց պետական աջակցության գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար դժվար, իսկ որոշ դեպքերում անհնար լինում վճարել ապահովագրավճարները:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ապահովագրական շուկան արագ տեմպերով զարգանում է, և տարեց տարի ավելանում են այն երկրների թիվը, որոնք ապահովագրության միջոցով են փորձում կառավարել գյուղատնտեսական ռիսկերը: Բավական է նշել, որ գյուղատնտեսության ապահովագրության բոլոր պայմանագրերի գծով ամբողջ աշխարհում 2005թ. հավաքագրվել է 8 մլրդ. ԱՄՆ դոլար ապահովագրավճար, իսկ արդեն 2011թ. այդ ցուցանիշը կազմել է 23.5 մլրդ. ԱՄՆ դոլար: Չնայած նրան, որ գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրավճարների ծավալն այս տարիներին աճել է գրեթե 3 անգամ, սակայն նրա մասնաբաժինն ընդհանուր ապահովագրավճարների մեջ շարունակում է զբաղեցնել շատ փոքր բաժին (ընդամենը 0.83%): «Swiss Re» ընկերության կանխատեսումների համաձայն այս ցուցանիշը կունենա աճի միտում՝ 2025թ. հասնելով 7-10%, իսկ զարգացող երկրներում ագրոապահովագրության գծով հավաքագրված ապահովագրավճարները կկազմեն 14-19 մլրդ. ԱՄՆ դոլար:

Գյուղատնտեսության ապահովագրական շուկայում առաջարկվում են պայմանագրերի տարբեր տեսակներ, որոնք դասակարգվում են ըստ մի շարք հատկանիշների: Ըստ ապահովագրության օբյեկտի տարբերում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի, կենդանիների, անտառների, ջերմոցների, ակվակուլտուրաների ապահովագրության պայմանագրեր: Ըստ ապահովագրական հատուցումների հաշվարկման եղանակի գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերը դասակարգվում են երեք խմբի՝ վնասի վրա հիմնված պայմանագրեր, եկամուտների ապահովագրության պայմանագրեր, ինդեքսի վրա հիմնված պայմանագրեր: Վնասի վրա հիմնված գյուղատնտեսության ապահովագրության տարատեսակներն են անվանական ռիսկից ապահովագրությունը և բազմակի ռիսկերից ապահովագրությունը: Եկամուտների ապահովագրությունը պաշտպանվածություն է տրամադրում ինչպես ցածր բերքատվության, այնպես էլ գնանկման ռիսկերից: Ինդեքս ապահովագրությունն ինովացիոն պրոդուկտներից է, որը կիրառվում է հատկապես զարգացող երկրներում, որտեղ գյուղատնտեսության ապահովագրության ավանդական պրոդուկտները գտնվում են զարգացման ցածր մակարդակի վրա, կամ ընդհանրապես բացակայում են: Այս պրոդուկտի էությունը կայանում է նրանում, որ ապահովագրական հատուցումների տրման համար հիմք է հանդիսանում ոչ թե փաստացի վնասի մեծությունը, այլ՝ պայմանագրում նշված ինդեքսը, որի դերում կարող են հանդես գալ եղանակային ցուցիչները (քամու արագություն, օդի ջերմաստիճան, տեղումների քանակ և այլն), արբանյակային պատկերները և տվյալ տարածաշրջանի միջին բերքի մեծությունը:

Գյուղատնտեսության ապահովագրության մեթոդաբանական կարևոր հարցերից է ապահովագրավճարների սուբսիդավորման գումարի չափի որոշումն ըստ առանձին

տարածաշրջանների ապահովագրական արժեքի, գումարի, հատուցումների, սակագնի հաշվարկը: Երկրների մեծ մասում այս ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը հաստատվում է պետության կողմից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ապահովագրության ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ են երկարաժամկետ, հավաստի և ամբողջական վիճակագրական տվյալներ, որոնք ՀՀ-ում դեռևս բացակայում են: Վերլուծությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ապահովագրության զարգացումն ընթացել է պարզ պրոդուկտից (մեկ ռիսկից ապահովագրություն) դեպի ավելի բարդ պրոդուկտ (բազմակի ռիսկերից ապահովագրություն): Գտնում ենք, որ այս հանգամանքը չափազանց կարևոր է գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման հատկապես սկզբնական փուլում, քանի որ ոչ ճիշտ պրոդուկտի կիրառումը կարող է հանգեցնել համակարգի ձախողմանը:

Ատենախոսության երկրորդ՝ «Գյուղատնտեսության ապահովագրական համակարգի միջազգային փորձը և տեղայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության ապահովագրական համակարգի միջազգային փորձը, ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ռիսկերը և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները, վերլուծվել և գնահատվել են ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման ձեռնարկումները, բացահայտվել են համակարգի ներդրման հետ կապված հիմնախնդիրները:

Ուսումնասիրվել է ինչպես զարգացած գյուղատնտեսության ապահովագրական համակարգ ունեցող (ԵՄ երկրներ, ԱՄՆ), այնպես էլ պիլոտային ձևով իրականացվող երկրների (Մոնղոլիա, Մալավի, Հնդկաստան և այլն) փորձը, ինչը հնարավորություն է տվել մշակել Հայաստանի Հանրապետության ներկայիս պայմաններին համապատասխան և գործուն կառուցակարգեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն 2015թ. հունվարի 2-ից Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ է՝ կարևորել ենք Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի և Բելառուսի գյուղատնտեսության ապահովագրության փորձի ուսումնասիրումը: Տարածաշրջանում գյուղատնտեսության - ապահովագրական համակարգի զարգացման միտումները պարզելու նպատակով անդրադարձել ենք նաև ՀՀ հարևան երկրներում գործող համակարգերին:

Եվրամիության երկրներում կիրառվող ռիսկի կառավարման հիմնական գործիքներն են հետադետային օգնությունները, փոխադարձ ապահովագրությունը և ապահովագրությունը: Կարկուտի ռիսկից մշակաբույսերի ապահովագրությունն իրականացվում է ԵՄ շատ երկրներում առանց պետական աջակցության, իսկ բազմակի ռիսկերից բերքի ապահովագրությունը՝ հիմնականում պետական աջակցությամբ: Եվրոպական մի շարք երկրներում գյուղատնտեսության ապահովագրության անբաժանելի մասն են կազմում համաապահովագրական պուլերը: Կենդանիների ապահովագրությունը զարգացած է հատկապես Գերմանիայում: ԱՄՆ-ն ամենազարգացած գյուղատնտեսության ապահովագրական համակարգ ունեցող երկիրն է, որտեղ պետությունը հսկայական միջոցներ է տրամադրում այս համակարգին. սուբսիդավորվում են ինչպես ապահովագրավճարները, այնպես էլ ընկերությունների գործավարման ծախսերը: Մի շարք երկրներում

գյուղատնտեսության ապահովագրություն իրականացնում են միայն մասնավոր ապահովագրական ընկերությունները (ԱՄՆ, ՌԴ, Իսպանիա և այլն), որոշ երկրներում՝ միայն պետական ապահովագրական ընկերությունները (Հունաստան, Բելառուս, Իսրայել), իսկ որոշ երկրներում՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ապահովագրական ընկերությունները (Կանադա, Գերմանիա): Ըստ իրականացման եղանակների տարբերում են գյուղատնտեսության ապահովագրության երկու տարատեսակ՝ պարտադիր և կամավոր: Բելառուսում, Ղազախստանում, Հունաստանում գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում է պարտադիր եղանակով, իսկ ՌԴ-ում, Գերմանիայում և այլ երկրներում՝ կամավոր: Ղազախստանում գյուղատնտեսության ապահովագրության շրջանակներում փոխհատուցվում են ապահովագրական պատահարի արդյունքում ֆերմերի կողմից կատարված արտադրական ծախսերը, իսկ ՌԴ-ում և Բելառուսում՝ բերքի կորուստը: ՌԴ-ում գյուղատնտեսության ապահովագրական համակարգն առաջարկում է և՛ ապահովագրության օբյեկտների, և՛ ապահովագրական ռիսկերի ավելի լայն ցանկ, սակայն կամավորության սկզբունքի պատճառով ապահովագրական ընդգրկվածության աստիճանը դեռևս շատ ցածր է: Համաշխարհային Բանկի աջակցությամբ ինդեքս ապահովագրություն իրականացվել է ավելի քան 20 երկրում, այդ թվում Հնդկաստանում, Մալավիում, Թայլանդում, Կենտրոնական Ամերիկայում, Ղազախստանում, Մոնղոլիայում և այլն: Որոշ երկրներում ինդեքս ապահովագրությունը կիրառվել է բուսաբուծության ճյուղում (Հնդկաստան, Մալավի), իսկ որոշ երկրներում՝ անասնաբուծության (Մոնղոլիա)՝ նպաստելով ոչ միայն գյուղատնտեսության, այլ ամբողջ տնտեսության կայունացմանն ու զարգացմանը:

ՀՀ հարևան երկրներում գյուղատնտեսության ապահովագրության ուղղությամբ գործնական քայլեր վաղուց են կատարվել: Այսպես, Իրանում գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ քննարկումներ անց են կացվել դեռևս 1970-ականներից, իսկ «Գյուղատնտեսության ապահովագրության մասին» օրենքն ընդունվել է 1983թ.: Ներկայումս Իրանում ապահովագրվում են շուրջ 25 տեսակի մշակաբույսեր, ինչպես նաև կենդանիներ, անտառներ և արոտավայրեր:³ Ադրբեջանում 2007թ. ընդունվել է «Ադրբեջանում գյուղատնտեսության աջակցության և զարգացման մասին» օրենքը, որի համաձայն պետությունը սուբսիդավորում է ապահովագրավճարների 50%: Պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովագրվող մշակաբույսերն են ցորենը, գարին, եգիպտացորենը, արևածաղիկը, կարտոֆիլը, շաքարի ճակնդեղը և բանջարեղենը:⁴ Թուրքիայում գործող ագրոապահովագրական համակարգը նման է Իսպանիայում գործող համակարգին: Գյուղատնտեսության ապահովագրության պուլը (TARSIM) հիմնված է «պետություն-մասնավոր հատված համագործակցության» վրա: Այստեղ ևս ապահովագրավճարների 50%-ը սուբսիդավորվում է պետության կողմից: Վրաստանում գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագիր իրականացվում է 2014թ.

³ <http://www.agroinsurance.com/en/practice/?pid=6604>

⁴ <http://www.agroinsurance.com/ru/news/?pid=28202>

սեպտեմբերի 1-ից, որի համար հատկացվել է 3 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է նպաստել գյուղատնտեսությունում ապահովագրության ներդրման գործընթացին, գյուղատնտեսական գործունեության զարգացմանը, տնտեսավարողների միջև մրցակցության խթանմանը, բերքի կորուստների կանխմանը և ռիսկերի կառավարմանը: Գյուղատնտեսության ապահովագրության միջավայրի ուսումնասիրման նպակատով Գերմանական զարգացման բանկը (KfW) տրամադրել է 200000 եվրո գումար:⁵

«Ը գյուղատնտեսության ոլորտը գրեթե ամեն տարի հսկայական վնասներ է կրում տարատեսակ ռիսկերի, մասնավորապես տարերային աղետների հետևանքով: Աղյուսակ 1-ում ներկայացրել ենք «Ը գյուղատնտեսության համար վտանգ ներկայացնող հիմնական տարերային աղետները 2005-2014թթ. կտրվածքով:

Աղյուսակ 1.

Գյուղատնտեսությանը սպառնացող հիմնական տարերային աղետները «Ը-ում (2005-2014թթ.)*

Տարիներ	Կարկտահարություն	Ցրտահարություն	Ուժեղ քամիներ	Ձնաբուք, ձնահյուս, ձնահողմ	Ջրհեղեղ	Տեղատարափ անձրև
2005	43	0	19	12	31	5
2006	25	0	21	17	16	4
2007	42	0	24	15	86	19
2008	34	2	44	27	15	7
2009	58	2	55	7	37	30
2010	32	0	45	19	29	19
2011	53	0	29	41	39	17
2012	41	0	38	82	4	15
2013	33	3	48	77	8	7
2014	44	0	114	64	7	12
Ընդամենը	405	7	434	360	372	135
Միջինը	40.5	0.7	43.4	36	37.2	13.5

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ «Ը արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների հիման վրա:⁶

Գյուղատնտեսության համար հատկապես մեծ վտանգ են ներկայացնում ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը: Միայն Արմավիրի մարզում 2013թ. մայիսի 12-ին, 17-ին, ինչպես նաև մնացած օրերին տեղի ունեցած կարկտահարությունը շուրջ

⁵ <http://newsgeorgia.ru/economy/20140617/216662492.html>

⁶ «Ը արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.mes.am/am/statistics>

25.3մլրդ. դրամի վնաս է հասցրել մարզի գյուղատնտեսությանը:⁷ 2014թ. մարտի վերջին և ապրիլի սկզբին Հայաստանում արձանագրված ցուրտ եղանակը 11մլրդ.181մլն. դրամի վնաս է պատճառել: ՀՀ-ում բնակլիմայական ռիսկերի հետևանքով միայն բուսաբուծության ճյուղում բերքի ամենամյա կորուստները կազմում են ավելի քան 35-40 մլրդ. դրամ, որն էապես վատթարացնում է գյուղատնտեսությունում բազմահազար ապրանքարտադրողների կենսապայմանները:⁸

Յուրաքանչյուր տարերային աղետ իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն գյուղացու, այլև՝ ամբողջ բնակչության և տնտեսության վրա: Տարերային աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունն իրականացնում է տարատեսակ միջոցառումներ: Սակայն կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ այդ միջոցառումների ազդեցության արդյունավետությունն այնքան էլ բարձր չէ, և տարերային աղետների կառավարման նպատակով պետությունը պետք է մշակի և վարի այլ քաղաքականություն՝ շեշտը դնելով ռիսկերի կառավարման այլ գործիքների՝ մասնավորապես ապահովագրական համակարգի վրա: Նշված քաղաքականությունը հնարավորություն կտա «իրավիճակային» լուծումներից անցում կատարել «երկարաժամկետ» լուծումների:⁹

ՀՀ-ում անկախացումից հետո գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման փորձեր կատարվել են, իսկ գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարական փաստաթղթերում բազմիցս նշվել են գյուղատնտեսությունում ռիսկերի գնահատման, փորձնական ապահովագրական ծրագրերի իրականացման և ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացման մասին: Սակայն դեռևս իրական քայլեր չեն ձեռնարկվել գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման և կառուցակարգերի մշակման գործընթացում ներառված սուբյեկտների մասնակցության ու ներդրումների չափի գնահատման հետ կապված:¹⁰

Դեռևս 1995թ. հուլիսի 5-ին ուժի մեջ մտավ «Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների գույքի կամավոր ապահովագրության մասին» ՀՀ կառավարության որոշումը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, 1997թ. կազմավորվեց «Հայագրոապահովագրություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որը կոչված էր իրականացնելու գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի ապահովագրություն: Ընկերությունը գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրություն իրականացրեց շուրջ 1.5 տարի, և վնասաբերության պատճառով

⁷ Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի 5 ամիսների գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, Հավելված ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 13-ի նիստի N 23 արձանագրային որոշման. - էջ 12

⁸ Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հայեցակարգի նախագիծ, 2008թ.- էջ 4 <http://www.minagro.am/doc/apahovagr.hayec.pdf>

⁹ Ոսկանյան Գ.Վ., ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման քաղաքականությունը: // Ագրոգիտություն, 3-4, 2015. - էջ 87-88

¹⁰ Ոսկանյան Ա., Ոսկանյան Գ., ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման խոչընդոտներն ու պետական աջակցության անհրաժեշտությունը:// Ագրոգիտություն, 1-2, 2013.-էջ 32

դադարեցվեց նրա գործունեությունը: ՀՀ կառավարությունը ստիպված եղավ ընկերությունում ապահովագրված գյուղացիների կրած վնասների մի մասը՝ 60-70մլն դրամ գումարի չափով, փոխհատուցել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:¹¹ Ցավոք, ագրոապահովագրության իրականացման այս փորձի հետ կապված մանրամասն տեղեկությունները բացակայում են, ինչը թույլ չի տալիս ամբողջությամբ գնահատել և բացահայտել ձախողման պատճառները:

Սյունիքի մարզի Տոլորսի կոոպերատիվում 2005թ. իրականացվել է փոխադարձ ապահովագրության ծրագիր: Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության գործնական ներդրման առումով առավել բարձր հավանականություն ունի գյուղատնտեսական կոոպերատիվներում փոխադարձ ապահովագրության հիմնադրամի ձևավորման միջոցով ապահովագրության գործընթացի կազմակերպումը: Ծրագրի իրականացման արդյունքներն էականորեն բարձր կլինեին, եթե 2006թ. երաշտի պատճառով Տոլորսի կոոպերատիվի անդամները մեծ վնասներ չկրեին: Հայաստանում առաջին անգամ գյուղատնտեսական կոոպերատիվի շրջանակում կազմակերպվեց գյուղատնտեսական կենդանիների վնասների փոխհատուցման համակարգ՝ գյուղատնտեսական ռիսկերի կառավարման փոխադարձ ապահովագրության սկզբունքների կիրառման միջոցով:¹²

2008թ. մշակվեց «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման» հայեցակարգի նախագիծը, որը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ապահովագրման տեսլականը և առանձնահատկությունները, առաջարկում դրա իրականացման հնարավոր ուղղությունները և նախադրյալներ ստեղծում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ձևավորմանն ուղղված նպատակային ծրագրի մշակման համար:

2010թ. նոյեմբերի 19-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը», համաձայն որի որպես գյուղատնտեսական ռիսկերի մեղմացման ուղղություն նախատեսված է գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրման աջակցությունը: «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների» ցանկում նախատեսված է 2013-2020թթ. իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի և ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում: 2017թ. և հետագա տարիներին նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտում

¹¹ Կիրակոսյան Կ., Գյուղատնտեսական կենդանիների փոխադարձ ապահովագրության կազմակերպումը, Խորհրդատվություն ֆերմերին, Երևան, 2007թ.- էջ 6-7

¹² Կիրակոսյան Կ., Գյուղատնտեսական կենդանիների փոխադարձ ապահովագրության կազմակերպումը, Խորհրդատվություն ֆերմերին, Երևան, 2007թ.- 43 էջ

ապահովագրական համակարգի ներդրման ծրագիր:¹³ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նախաձեռնել է «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության հետ մարզերից մեկում՝ Վայոց Ձորում, իրականացնել անասնազվխաքանակի ապահովագրման պիլոտային ծրագիր: Մարզի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված մարզում իրականացվել է խոշոր եղջերավորների հաշվառում և համարակալում:¹⁴ Եթե գյուղատնտեսության ապահովագրությունը դիտարկում ենք մասնավոր ապահովագրական ընկերությունների տեսանկյունից, ապա սա կարելի է համարել ճիշտ որոշում: Սակայն մեր կարծիքով գյուղատնտեսության ապահովագրությունը պետք է դիտարկել գյուղացիական տնտեսությունների տեսանկյունից, ովքեր ունեն ապահովագրական պաշտպանվածության կարիք ոչ թե անասնաբուծության, այլ՝ բուսաբուծության ճյուղում:

Հաշվի առնելով ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման անհրաժեշտությունը և հրատապությունը՝ ՀՀ-ում գործող տարբեր կառույցների կողմից կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ, որոնցից մի քանիսին մենք անմիջական մասնակցություն ենք ունեցել: Մասնավորապես, 2012թ. նոյեմբերի 12-14-ը ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կազմակերպվել էր քննարկում գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ շահագրգիռ անձանց մասնակցությամբ: Նմանատիպ քննարկում անցկացվել է նաև 2014թ. հուլիսին ՄԱԶԾ-ի նախաձեռնությամբ: Իսկ 2015թ. մարտի 10-ին տեղի ունեցավ Հայաստանում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության կարգավիճակի, զարգացման խոչընդոտների և հնարավորությունների վերաբերյալ քննարկումը, որը կազմակերպել էին ՀՀ կենտրոնական բանկը և Գերմանական զարգացման բանկը (KfW)՝ Հայաստանում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում: Ի հարկե այս բոլոր հանդիպումները և քննարկումները նպաստում են գյուղատնտեսության ապահովագրության փորձի փոխանակմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանը, սակայն այստեղ պակասում է քաղաքական կամքը, որի պատճառով երկարում է համակարգի ներդրման ժամանակը:

Ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման ձեռնարկումների շարունակություն չունենալու ու ձախողման հիմնական պատճառներից է համակարգի ներդրման սկզբնական փուլում բազմակի ռիսկերից ապահովագրության իրականացումը, երբ փորձ է արվել ընդգրկել գրեթե բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերը: Բացի այդ պետության կողմից իրական

¹³ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 4 նոյեմբերի 2010 թվականի N 1476 – Ն, Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին

¹⁴ Ինգո Արմենիա ԱԲԲԸ-ի պաշտոնական կայք՝ <http://www.ingoarmenia.am/news/more/id/265/lang/am>

աջակցություն, մասնավորապես ապահովագրավճարների սուբսիդավորման ուղղությամբ, չի ցուցաբերվել:

ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանն ու զարգացմանը խոչընդոտող գործոններից առանձնացվել են հետևյալները.

- ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսությանը հատկացվող փոքր գումարները,
- գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը,
- համապատասխան իրավաօրենսդրական դաշտի անկատարությունը,
- պետական աջակցության բացակայությունը,
- գյուղացիական տնտեսությունների տեղեկացվածության ցածր մակարդակը,
- գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը և ոչ ճիշտ ագրոտեխնիկական միջոցառումների իրականացումը,
- պետության կողմից տրամադրվող հետադեպային օգնությունները,
- ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից գյուղատնտեսության ապահովագրության փորձի բացակայությունը,
- աղքատության բարձր մակարդակը,
- գյուղացիական տնտեսությունների եկամուտների ցածր մակարդակը,
- արտագաղթի բարձր տեմպերը,
- ակտուարական ինստիտուտի բացակայությունը,
- որակյալ մասնագետների պակասը,
- տվյալների բազայի բացակայությունը և այլն:

Կատարված վերծրություններից պարզ է դարձել, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ կա պահանջարկ և պետական աջակցության դեպքում տնտեսավարողները պատրաստ են վճարել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի ձեռքբերման համար: Պատկերն այլ է, գյուղատնտեսության ապահովագրության առաջարկի հետ կապված, քանի որ ներկայումս ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների մեծ մասը դեռևս պատրաստ չէ և ոչ էլ հետաքրքրություն ունի իրականացնել գյուղատնտեսության ապահովագրություն:

Ատենախոսության երրորդ՝ «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման կառուցակարգերը և կազմակերպահրավական հիմքերի ձևավորումը ՀՀ-ում» գլխում ներկայացվել են պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման իրավական հիմքերը, ապահովագրության ավանդական և ինովացիոն պրոդուկտների ներդրման ուղիները, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության ինստիտուցիոնալ համակարգը և գործունեության կառուցակարգերը:

Ներկայումս ՀՀ-ում ապահովագրության ոլորտը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով,

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:¹⁵ Ապահովագրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ գյուղատնտեսության ապահովագրության իրականացման համար բավարար իրավաօրենսդրական դաշտ ձևավորված չէ, ինչը բարդացնում է գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման գործընթացը: Հետևաբար գյուղատնտեսության ապահովագրության իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում համալրելու ներկայիս գործող իրավական դաշտը: Գյուղատնտեսության ապահովագրության իրականացման նախապայմաններից է պետական աջակցությունը, որի ամենատարածված ձևը ապահովագրավճարների սուբսիդավորումն է: Ապահովագրավճարների սուբսիդավորմամբ գյուղատնտեսության ապահովագրության իրականացման համար նախ և առաջ անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որով կսահմանվի՝

- ✓ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում պետական աջակցության տրամադրման կարգը,
- ✓ գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրին ներկայացվող պահանջները,
- ✓ փորձաքննության անցկացման կարգը,
- ✓ գյուղատնտեսության ապահովագրության կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի բովանդակությունը,
- ✓ գյուղատնտեսության ապահովագրության օբյեկտները,
- ✓ ապահովագրական դիսկերը և այլն:

Չնայած ապահովագրավճարների սուբսիդավորումը մտնում է «կանաչ զամբյուղի» մեջ, որի գծով որևէ սահմանափակում գոյություն չունի, սակայն սուբսիդավորման չափը պետք է լինի հիմնավորված, որպեսզի չխախտվի շուկայի հավասարակշռվածությունը և այն «բեռ» չհանդիսանա պետության համար: ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության մեկնարկային փուլում առաջարկում ենք սուբսիդավորման 50% սահմանաչափը՝ հետագայում կիրառելով սուբսիդավորման տարբերակված մոտեցում՝ առավելությունը տալով ՀՀ-ի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող մշակաբույսերին և տարածաշրջաններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վար ու ցանք կատարելու ժամանակ գյուղացին կատարում է հսկայական ծախսեր և ապահովագրավճարներ վճարելու համար դա ամենաանհարմար ժամանակն է՝ առաջարկում ենք ապահովագրավճարի վճարման հետևյալ տարբերակը. ապահովագրի և ապահովագրողի միջև պայմանագիրը կնվքում և ապահովագրավճարը ամբողջությամբ (100%) վճարվում է բերքահավաքից հետո (հիմնականում աշնանը), իսկ պայմանագիրը գործողության մեջ է մտնելու հաջորդ տարի ցանքը կատարելուց 15 օր հետո: Այնուհետև,

¹⁵ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունված 09.04.2007թ., ՀՕ-177-Ն), հոդված 2, կետ 1.

պետությունը գյուղացուն է վերադարձնելու մուծված ապահովագրավճարի 50%-ը (սուբսիդավորման գումար):

Գյուղատնտեսության ապահովագրության ամենակարևոր գործընթացներից է փորձաքննության անցկացումը և վնասների գնահատումը: Վնասը գնահատողները պետք է զինված լինեն ինչպես ապահովագրական, այնպես էլ գյուղատնտեսական գիտելիքներով: Կատարված ուսումնասիրություններից ելնելով գտնում ենք, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության գծով վնասների գնահատումը պետք է իրականացնեն անկախ փորձագետները, ովքեր պետք է բավարարեն մի շարք պահանջների: «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» ՀՀ օրենքով պետք է սահմանվեն գյուղատնտեսության ապահովագրության օբյեկտներն ու ռիսկերը: Ընդ որում, օրենքում պետք է նշվեն ապահովագրության ենթակա բոլոր օբյեկտներն ու ռիսկերը՝ նշելով փուլային եղանակով դրանց ընդգրկման ժամկետները:

Ամեն տարի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության գլխավորությամբ և շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ, պետք է մշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվի գյուղատնտեսության ապահովագրության տարեկան ծրագիրը, որը պետք է ներառի՝

- ❖ տվյալ տարում պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսության ապահովագրության օբյեկտները,
- ❖ տվյալ տարվա համար սուբսիդավորման մոտավոր գումարի չափը:

Գյուղացիական տնտեսությունների շրջանում անցկացված հարցումներից պարզ է դարձել, որ տնտեսավարողների 82%-ի կարծիքով գյուղատնտեսության ապահովագրությունը պետք է իրականացվի կամավոր, իսկ 18%-ի կարծիքով՝ պարտադիր եղանակով: Իսկ ապահովագրական ընկերությունների մասնագետները կողմ են գյուղատնտեսության ապահովագրության իրականացման պարտադիր եղանակին: Կատարված վերլուծությունները հիմք են տալիս առաջարկելու, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման սկզբնական փուլում այն պետք է իրականացվի պարտադիր եղանակով: Այն հնարավորություն կտա՝

- նվազագույնի հասցնել վատ ընտրանքի ռիսկը,
- ունենալ ավելի հավասարակշռված պայմանագրերի պորտֆել,
- նվազեցնել գործավարման ծախսերը մեկ ապահովագրի հաշվով,
- դիվերսիֆիկացնել տարերային աղետների հետ կապված ռիսկերը,
- ապահովել 100%-ոց ընդգրկվածություն:

Պարտադիր ապահովագրությանը զուգահեռ մասնավոր ընկերությունները կարող են առաջարկել գյուղատնտեսության կամավոր ապահովագրության պրոդուկտներ, որոնք կլրացնեն գյուղատնտեսության պարտադիր ապահովագրության ծրագրերը: Համապատասխան փորձ և հմտություններ ձեռք բերելուց հետո, կարելի է հրաժարվել գյուղատնտեսության ապահովագրության իրականացման պարտադիր եղանակից:

ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման և հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրագործել ոչ միայն կարճաժամկետ

(տարեկան), այլն՝ երկարաժամկետ (10 տարի) ապահովագրական ծրագիր: Վերջինիս նպատակը պետք է լինի առաջադրել այնպիսի միջոցառումներ և դրանց իրականացման մեխանիզմներ, որոնք կնպաստեն ագրոապահովագրական համակարգի ձևավորմանը: Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացը պետք է իրականացվի չորս փուլով.

- առաջին փուլ՝ մասնագիտական խմբի ձևավորում և ուսուցում, անվանական ռիսկից ապահովագրության կանոնների մշակում, պրոդուկտի ներկայացում հաճախորդներին, պարտադիր եղանակով անվանական ռիսկից ապահովագրության իրականացում և այլն (2 տարի),
- երկրորդ փուլ՝ ինդեքսների մշակում, տեխնիկական աջակցության հայտի ներկայացում Համաշխարհային բանկ, ռիսկերի քարտեզագրում և այլն (2 տարի),
- երրորդ փուլ՝ բազմակի ռիսկերից ապահովագրության իրականացում, պետություն-մասնավոր հատված համագործակցության հաստատում (PPP), անկախ փորձագետների ինստիտուտի ձևավորում և այլն (3 տարի),
- չորրորդ փուլ՝ կենդանիների ապահովագրության իրականացում փոխադարձ ապահովագրության միջոցով և այլն (3 տարի):

Համայնքային մակարդակներում փոխադարձ ապահովագրության կազմակերպման նպատակով անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել «Փոխադարձ ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, իսկ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «Ֆիզիկական և իրավաբանական անձիք կարող են ապահովագրել իրենց գույքը փոխադարձ ապահովագրության միություններ հիմնադրելու միջոցով: Փոխադարձ ապահովագրության միության միջոցով ապահովագրվում են միայն անդամների գույքային շահերը, և այն հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն»: «Փոխադարձ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթներն են լինելու.

- ✓ փոխադարձ ապահովագրության իրականացման կարգը,
- ✓ փոխադարձ ապահովագրության օբյեկտները,
- ✓ փոխադարձ ապահովագրության միության կանոնադրությունը,
- ✓ փոխադարձ ապահովագրության միության անդամների իրավունքներն ու պարտականությունները,
- ✓ փոխադարձ ապահովագրության միության անդամակցության դադարեցումը,
- ✓ փոխադարձ ապահովագրության միության կառավարման մարմինները և վերահսկող մարմինը,
- ✓ փոխադարձ ապահովագրության միության տնօրենը,
- ✓ միության գույքը,
- ✓ ապահովագրավճարները,
- ✓ ապահովագրական պահուստները և այլն:

Փոխադարձ ապահովագրությունն իրականացվելու է կամ միության կանոնադրության կամ ապահովագրության պայմանագրի հիման վրա: Միությունը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում փոխհատուցել իր անդամի կրած վնասները: Փոխադարձ ապահովագրության միությունը կարող է ապահովագրել իր ստանձնած ռիսկը այն ապահովագրողի մոտ, ով ունի այդ դասի գծով լիցենզիա: Ապահովագրության օբյեկտ կարող է հանդիսանալ միայն միության անդամի գույքային շահերը:¹⁶

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ՀՀ-ում պետական աջակցությամբ ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել հետևյալ իրավական ակտերը.

- ❖ «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» ՀՀ օրենքը,
- ❖ «Փոխադարձ ապահովագրության մասին» ՀՀ օրենքը,
- ❖ Գյուղատնտեսության ապահովագրության տարեկան ծրագիրը,
- ❖ Գյուղատնտեսության ապահովագրության երկարաժամկետ ծրագիրը,
- ❖ «Անկախ փորձագետների որակավորման և փորձաքննության անցկացման կարգը»,
- ❖ «Գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրավճարների սուբսիդավորման կարգը»:

Հաշվի առնելով հացահատիկային մշակաբույսերի կարևոր նշանակությունը պարենային անվտանգության ապահովման հարցում, ինքնաբավության դեռևս ցածր մակարդակը, ինչպես նաև ապահովագրության տեսանկյունից հացահատիկային մշակաբույսերի ռիսկայնության ցածր մակարդակը՝ գտնում ենք, որ գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է ապահովագրել հացահատիկային մշակաբույսերի բերքը:

Աղյուսակ 2.

Հացահատիկային մշակաբույսերի բերքի ապահովագրության ցուցանիշները

Ցուցանիշը	Արժեքը (ՀՀ դրամ)
Ապահովագրական արժեք	70870 մլն
Ապահովագրական գումար	56697.6 մլն
Ապահովագրակավճար	3401.8 մլն
Մեկ հա-ի ապահովագրավճարը	18028
Սուբսիդիայի չափը	1700.9մլն

¹⁶ Федеральный Закон РФ от 29 ноября 2007г. N 286-ФЗ “О взаимном страховании”, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_72848/

Կատարված հաշվարկներից պարզ է դարձել, որ կարկուտի ռիսկից 1 հա ցանքատարածության հացահատիկային մշակաբույսերի բերքի ապահովագրության համար տնտեսավարող սուբյեկտը պետք է վճարի 18028 ՀՀ դրամ, որի 50%-ը սուբսիդավորման տեսքով ետ է ստանալու պետությունից (աղյուսակ 2):

Հաշվի առնելով ինդեքս ապահովագրության առավելությունները՝ պարբերական բնույթի գյուղատնտեսական ռիսկերի կառավարման նպատակով առաջարկում ենք կիրառել ինդեքս ապահովագրությունը, որի համար անհրաժեշտ է իրականացնել երեք խումբ միջոցառումներ՝


1. Գնահատել ռիսկերը, պրոդուկտի նպատակահարմարությունը և նախապայմանների առկայությունը,
2. Հավաքագրել տվյալներ, մշակել եղանակային ցուցիչները և ապահովագրության կանոնները,
3. Պրոդուկտը ներկայացնել պոտենցիալ ապահովադիրներին և կնքել ապահովագրության պայմանագրերը:¹⁷

Կատարված հետազոտություններն ու ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացը չի կարող նախաձեռնվել ներկայումս ՀՀ ապահովագրական շուկայում գործող մասնավոր ընկերությունների կողմից, քանի որ

- դրանք չունեն համապատասխան փորձ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում,
- պատրաստ են սկզբնական շրջանում ապահովագրել գյուղատնտեսական կենդանիներ կամ ջերմոցներ ու ջերմատներ, սակայն ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական պաշտպանվածության ավելի մեծ կարիք է զգացվում բուսաբուծության ճյուղում,
- շահույթ հետապնդող կազմակերպություններ են և ապահովագրավճարի մեջ նախատեսում են նվազագույնը 20% շահույթ, ինչն էլ բերելու է ապահովագրավճարի նույն չափով բարձրացմանը,
- գյուղացիական տնտեսությունները չեն վստահում մասնավոր ապահովագրական ընկերություններին:

Հարցումների միջոցով փորձել ենք պարզել, թե գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտները ինչպիսի ապահովագրական ընկերությունում կցանկանային ապահովագրվել: Հարցման մասնակիցների 63%-ը նախընտրում է կնքել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագիր պետական ապահովագրական ընկերության հետ (զծապատկեր 1):

¹⁷ Weather index insurance for agriculture: Guidance for Development Practitioners, The World Bank, 2011. - 116 p., www.worldbank.org



Գծապատկեր 1. Ինչպիսի՞ ընկերության հետ եք նախընտրում կնքել գյուղատնտեսության ապահովագրության պայամանագիր:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ առաջարկվում է ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացն իրականացնել ՀՀ կառավարության հիմնադրած պետական ապահովագրական ընկերության միջոցով (Ագրոապահովագրական ընկերություն): Հայաստանում Ագրոապահովագրական ընկերություն ստեղծելու նախաձեռնությունը համահունչ է գյուղատնտեսության ապահովագրության միջազգային լավագույն փորձին: Որպես շահագրգիռ կողմեր Ագրոապահովագրական ընկերության ստեղծման նախաձեռնությամբ պետք է հանդես գան ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կենտրոնական բանկը, գյուղացիական միավորումները, գյուղատնտեսական կոոպերատիվները, նախաձեռնեն և մշակեն համապատասխան մեթոդական ցուցումներ և ներկայացնեն ՀՀ կառավարության հաստատմանը: Ագրոապահովագրական ընկերության ստեղծման միջոցառումների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում, որի համար հիմք է հանդիսացել «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի ստեղծման միջոցառումների ցանկը:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ի ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը պետք է լինի 1.5 մլրդ. ՀՀ դրամ:¹⁸ Գտնում ենք, որ Ագրոապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալը պետք է լինի 1.95 մլրդ. դրամ, որից կանոնադրական կապիտալը՝ 1.5 մլրդ. դրամ և ընկերության գլխավոր պահուստը՝ 0.45 մլրդ. դրամ: Ընկերությունն իր գործունեության ընթացքում կարող է ներգրավվել ոչ միայն պետական բյուջեի միջոցները, այլև մասնակցել միջազգային տարբեր ծրագրերի և օգտվել միջազգային կառույցների կողմից տրամադրված միջոցներից:

¹⁸ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի կանոնակարգ 3/02 «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները հաստատելու մասին» 311 Ն որոշում, <https://www.cba.am/AM/laregulations/kan-302.pdf>


Ագրոապահովագրական ընկերության ստեղծման միջոցառումների ցանկը

Աշխատանքներ	Ժամկետ	Պատասխանատուներ	Մեկնաբանություն
1	2	3	4
Ագրոապահովագրական ընկերության ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	2 ամիս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Տեղեկանք-հիմնավորում Ագրոապահովագրական ընկերության ստեղծման վերաբերյալ
Ագրոապահովագրական ընկերության կազմակերպական կառուցվածքի մասին որոշում և նախապատրաստող թիմի հավաքագրում	2 ամիս	Հիմնադիրներ, համակարգող մարմին	10-15 անձից բաղկացած թիմ, որի կազմում պետք է ընդգրկվեն գյուղատնտեսության, մարքեթինգի և վաճառքի, ռիսկերի գնահատման, ֆինանսական կառավարման, հաշվապահական հաշվառման, ՏՏ ապահովման, կառավարման համար պատասխանատու անձիք:
Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի պետական աջակցության վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակում	6 ամիս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, կառավարության իրավական հարցերով խորհուրդ, ՀՀ կենտրոնական բանկ, տեղական և միջազգային փորձագետներ	Համապատասխան օրենսդրական դաշտի փոփոխություններ, օրենքների և հայեցակարգերի նախագծերի մշակում:

աղյուսակ 3.-ի շարունակությունը

1	2	3	4
Ագրոապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալին համարժեք գումարի ապահովում պետական բյուջեից	1 ամիս	ՀՀ ֆինանսների նախարարություն	Կանոնադրական կապիտալի ամբողջ գումարի վճարում՝ ընկերության գրանցման պահին:
Ագրոապահովագրական ընկերության կանոնադրության մշակում, գրանցման և լիցենզիա ստանալու համար համապատասխան փաստաթղթերի ներկայացում ՀՀ կենտրոնական բանկ	4 ամիս	Նախապատրաստող թիմ	Անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում (գրանցման և լիցենզավորման դիմում, գործարար ծրագիր, ներքին կանոնակարգեր, ընկերության ղեկավարների ցանկը, գործունեության տարածքի համապատասխանության փաստաթուղթ և այլն)
Ապագա աշխատակազմի հավաքագրում	3 ամիս	Գործադիր մարմին, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Աշխատակազմի անդամները պետք է մասնակցեն ներքին կանոնների և կանոնակարգերի մշակման աշխատանքներին
Ղեկավարության և աշխատակազմի վերապատրաստում	2 ամիս	Գործադիր մարմին	Այս աշխատանքները պետք է համակարգվեն ապահովագրական պրոդուկտների մշակման աշխատանքների հետ զուգահեռ:
Միջազգային ազմակերպությունների հետ համագործակցության կապերի հաստատում	4 ամիս	Գործադիր մարմին, խորհրդատուներ	Միջազգային ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններ, դոնոր կազմակերպություններ

Ագրոապահովագրական ընկերության գործունեությունը պետք է ուղղված լինի ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրմանը, կայացմանը և հետագա զարգացմանը: Ագրոապահովագրական ընկերության կառավարման մարմիններն են լինելու ընդհանուր ժողովը, խորհուրդը և գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը կամ տնօրինությունը: Գծապատկեր 2.-ում ներկայացված է Ագրոապահովագրական ընկերության կառուցվածքը:



Գծապատկեր 2. Ագրոապահովագրական ընկերության կազմակերպական կառուցվածքը

Ընկերության կողմից մատուցվող ծառայությունները և իրականացվող աշխատանքներն են լինելու.

- պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,
- պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսության ապահովագրության պայմանների և կանոնակարգերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ մասնագիտական տեղեկատվական նյութերի պատրաստում և հրապարակում,
- գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վիճակագրական, տեղեկատվական-վերլուծական հետազոտությունների իրականացում,
- անկախ փորձագետների ատեստավորման հետ կապված միջոցառումների կազմակերպում և անցկացում,

- գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերի կնքում և սպասարկում,
- վերաապահովագրական ընկերությունների հետ բանակցությունների վարում և պայմանագրերի կնքում,
- հաշվետվությունների կազմում և ներկայացում ՀՀ կենտրոնական բանկ և ՀՀ ֆինանսների նախարարություն,
- ապահովագրական պահուստների ձևավորում և դրանց հաշվին ներդրումների իրականացում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ուղղություններով և սահմանաչափերով և այլն:

Վերլուծությունները հիմք են տալիս եզրակացնելու որ ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի՝

- գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացմանը,
- գյուղատնտեսությունում ներդրումներ կատարելու գրավչության բարձրացմանը,
- գյուղատնտեսական աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացմանը,
- ցանքատարածությունների ավելացմանը,
- գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի ավելացմանը,
- աղքատության և արտագաղթի մակարդակների նվազեցմանը,
- գյուղական համայնքներում ապահովագրական մշակույթի տարածմանը,
- ապահովագրական շուկայի զարգացմանը,
- ապահովագրության ոլորտի մասնագետների համար նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը,
- վարկային միջոցների ձեռքբերման հնարավորությունների ընդլայնմանը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտն ամեն տարի հսկայական վնասներ է կրում տարատեսակ ռիսկերի հետևանքով, որն իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն գյուղատնտեսությունում տնտեսավարողների, այլև ամբողջ հասարակության վրա: Իհարկե ՀՀ կառավարությունը փորձում է որոշակի օգնություն ցուցաբերել այդ ռիսկերի տեղի ունենալու արդյունքում վնաս կրած գյուղացիներին, սակայն պետական բյուջեի հնարավորությունները թույլ չեն տալիս ամբողջությամբ փոխհատուցել առաջացած վնասները: Գյուղատնտեսության ոլորտի ամենաանվանխատեսելի, վտանգավոր և դժվար կառավարվող ռիսկերից են տարերային աղետները, որոնք պետք է կառավարվեն ապահովագրական համակարգի միջոցով: Գյուղատնտեսական մնացած ռիսկերը կարելի է կառավարել ռիսկի կառավարման այլ գործիքների կիրառմամբ:
2. ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացում կարևորվում է ապահովագրական պրոդուկտի ճիշտ ընտրությունը, որով մեծապես պայմա-

նավորված է գյուղատնտեսության ապահովագրական համակարգի կայացումը և հետագա զարգացումը: Հաշվի առնելով կարկուտի տեղի ունենալու հաճախականությունը, լուրջ բնույթը և դրա հետևանքով առաջացած վնասների հսկայական չափերը՝ վստահ կարելի է նշել, որ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրությունը պետք է սկսել կարկուտի ապահովագրությունից՝ ներառելով հացահատիկային մշակաբույսերը:

3. Ինդեքս ապահովագրության առավելությունները թույլ են տալիս ավելի դյուրին կազմակերպել գյուղատնտեսության ապահովագրության իրականացման գործընթացը: Ներկայումս գործում են մի շարք միջազգային կառույցներ, որոնք աջակցում են զարգացող երկրներին ինդեքս ապահովագրության ներդրման հետ կապված հարցերում: Առաջարկվում է ՀՀ գյուղատնտեսությունում սիստեմատիկ բնույթի ռիսկերը (ցրտահարություն, ուժեղ քամիներ, երաշտ) կառավարել ինդեքս ապահովագրության միջոցով, որի համար ՀՀ կառավարությունը պետք է հայտ ներկայացնի Համաշխարհային Բանկին տեխնիկական և այլ բնույթի աջակցություն ստանալու նպատակով: Միջազգային փորձագետների խորհրդատվությամբ տեղի մասնագետները պետք է իրականացնեն ռիսկերի քարտեզագրում, կազմեն աշխատանքայի պլան և իրականացնել պիլոտային ծրագիր մեկ կամ երկու մարզերում:
4. ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության իրականացման համար բացակայում է համապատասխան իրավաօրենսդրական դաշտը, որի հետ կապված անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան փոփոխություններ ներկայիս գործող իրավական ակտերում և համալրել դրանք նորերով: Մասնավորապես առաջարկվում է մշակել և գործողության մեջ դնել «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, «Փոխադարձ ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև մշակել և իրագործել գյուղատնտեսության ապահովագրության երկարաժամկետ (10 տարի) և կարճաժամկետ (1 տարի) ծրագրերը:
5. Վնասների գնահատումը գյուղատնտեսության ապահովագրության ամենաբարդ և կարևորագույն գործընթացներից է, որի հետ կապված առաջարկվում է հիմնել անկախ փորձագետների ինստիտուտը: Անկախ փորձագետը պետք է բավարարի մի շարք պահանջների (համապատասխան մասնագիտություն, բավարար գիտելիքներ, աշխատանքային փորձ և այլն) և ստանա անկախ փորձագետի որակավորման վկայական:
6. Գյուղատնտեսությունում ապահովագրական իրականացման կարևորագույն հարցերից է վերաապահովագրական պաշտպանվածությունը, քանի որ ապահովագրական ընկերության համար բավականին բարդ է գյուղատնտեսական ռիսկերի հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման հետ կապված ամբողջ պատասխանատվությունն իր վրա վերցնել: Գյուղատնտեսության ապահովագրության գծով վերաապահովագրություն կարելի է ձեռք բերել կամ պետությունից կամ միջազգային վերաապահովագրողներից: Հաշվի առնելով միջազգային վերաապահովագրական ընկե-

րությունների առավելությունները՝ առաջարկվում է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման սկզբնական փուլում վերաապահովագրական ծածկույթ ձեռք բերել առաջատար միջազգային վերաապահովագրողներից:

7. ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունները ներկայումս գյուղատնտեսության ապահովագրություն չեն իրականացնում: Միայն «Ինգո Արմենիա» և «Ռոսգոսստրախ» ընկերություններն են որոշակի տեսական բնույթ կրող աշխատանքներ տանում այս ուղղությամբ: Գյուղացիական տնտեսությունների շրջանում կատարված հարցման արդյունքները փաստում են մասնավոր ապահովագրողների նկատմամբ բնակչության վստահության ցածր մակարդակի մասին: Առաջարկվում է հիմնադրել պետական ապահովագրական ընկերություն (Ագրոապահովագրական ընկերություն), որը պետք է իրականացնի բացառապես գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրություն:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., Գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձի համեմատական վերլուծություն: // Ագրոգիտություն, 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2012. - էջ 536-541
2. Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., Գյուղատնտեսության ապահովագրության առանձնահատկությունները և ՀՀ-ում ներդրման անհրաժեշտությունը: // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 5, 2012.- էջ 130-139
3. Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման խոչընդոտներն ու պետական աջակցության անհրաժեշտությունը: // Ագրոգիտություն, 1-2, հունվար-փետրվար, 2013. - էջ 32-36
4. Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., Գյուղատնտեսական ռիսկերի կառավարումը ինդեքս ապահովագրության միջոցով: // Ագրոգիտություն, 3-4, 2014. - էջ 107-110
5. Ոսկանյան Ա.Ե., Ոսկանյան Գ.Վ., Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում պետական աջակցության ՌԴ փորձի ուսումնասիրումը և կիրառման հեռանկարները ՀՀ-ում: // Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспеченности и биоразнообразия / НАУА; Ред.кол.: Д.П. Петросян и др. -Ереван, Изд-во НАУА, 2014. - с. 217-220
6. Восканян А.Е., Восканян Г.В., Карапетян К.Л., Государственное регулирование и новые подходы политики развития сельского хозяйства Республики Армения: // Российская экономическая модель-3: институты развития: сб. материалов Международной научно.-практической конференции (14-18 мая 2014г., г. Анапа).- Краснодар, 2014. – с. 58-63
7. Ավետիսյան Ա.Ս., Ոսկանյան Գ.Վ., Միրզոյան Ծ.Հ., Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը որպես կլիմայական ռիսկերի մեղմման միջոց // Ֆինանսներ և էկոնոմիկա, #1, (163), հունվար, 2014.- էջ 38-41

8. Կարապետյան Կ.Լ., Ոսկանյան Գ.Վ., Պետական կարգավորումն ու ապահովագրական համակարգի ներդրման միտումները ՀՀ գյուղատնտեսությունում:// Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 2-րդ գիտաժողովի նյութեր:- Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2014.- էջ 33-37
9. Ոսկանյան Գ.Վ., Ինդերս ապահովագրության միջազգային փորձը: // Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспеченности и биоразнообразия / НАУА; Ред.кол.: Д.П. Петросян и др. - Ереван, Изд-во НАУА, 2014. - с. 225-229
10. Ոսկանյան Գ.Վ., ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման քաղաքականությունը: // Ագրոգիտություն, 3-4, 2015. - էջ 87-91

ВОСКАНЯН ГОАР ВАЗГЕНОВНА

**ФОРМИРОВАНИЕ МЕХАНИЗМОВ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ С ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКОЙ
В РА**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика и управление хозяйством, его сферами”.

Публичная защита диссертации состоится 10 мая 2016г., в 14.00 часов на заседании Специализированного совета ВАК РА 002 по экономике, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 74.

Диссертация посвящена разработке действенных механизмов внедрения страховой системы в сфере сельского хозяйства – факторов, обуславливающих устойчивое развитие села и сельского хозяйства.

Сельское хозяйство, будучи одной из важнейших отраслей экономики РА, имеющих стратегическое значение, является наиболее рисковым сектором экономической деятельности. Почти ежегодно сельское хозяйство несет огромные убытки от различных стихийных бедствий (града, заморозков, ураганов, засухи и т.д.), что препятствует устойчивому развитию данного сектора. Для минимизации ущерба, возникшего в результате воздействия неблагоприятных природных факторов, снижения возможных убытков, необходимо управление сельскохозяйственными рисками, которое является задачей не только фермерских хозяйств, но и общества и государства в целом. Одним из вариантов решения этой проблемы является страхование сельскохозяйственных рисков.

Цель исследования – предложить научно обоснованные организационно-хозяйственные мероприятия и концептуальные подходы по внедрению страхования сельскохозяйственных рисков, применение которых будет возможным в сформировавшихся в настоящее время социально-экономических условиях РА. Для достижения данной цели поставлена задача – изучить теоретические и методические основы агрострахования, особенности, традиционные и инновационные продукты, международный опыт по развитию системы страхования в аграрном секторе, выявить риски аграрного сектора РА и их социально-экономические последствия, анализировать начинания по внедрению агрострахования в РА, исследовать предпосылки и факторы, препятствующие внедрению системы страхования в сельскохозяйственном секторе РА, разработать организационно-хозяйственные, методологические предложения и механизмы государственной поддержки по внедрению системы страхования в сельском хозяйстве РА.

Проведенные в работе исследования и их анализ привели к ряду результатов, из которых обладающие научной новизной являются следующие:

- разработаны основные положения законов и подзаконных актов, необходимых для внедрения агрострахования с государственной поддержкой в РА,
- обоснована необходимость внедрения страхования сельскохозяйственных культур от номинального риска и индексного страхования в сельское хозяйство РА, разработаны мероприятия по применению этих продуктов,
- разработаны основные направления государственной поддержки внедрения системы страхования в сельском хозяйстве РА, а также структура и функции предлагаемой организации, осуществляющей агрострахование.

Актуальность темы исследования, обозначенные цели и задачи определены во введении. Установлены объект и предмет исследования, его теоретические, методологические и информационные основы; сформулированы результаты, являющиеся научной новизной; представлена практическая значимость исследования.

В диссертации определены экономическое значение страхования, его функции, история развития агрострахования, страховые продукты и особенности сельскохозяйственного страхования. Изучен международный опыт сельскохозяйственного страхования, особо акцентируя внимание на основные формы государственной поддержки и предельную величину субсидий как в развитых, так и в развивающихся странах. Представлены преимущества и недостатки индексного страхования, а также опыт его применения на примере ряда стран. Изучены особо опасные стихийные бедствия, препятствующие устойчивому развитию сельского хозяйства, и даны соответствующие страховые продукты по их управлению, анализированы начинания по внедрению страхования в секторе сельского хозяйства РА и представлена их оценка. В рамках темы диссертации проведены тематические тест-опросы, в которых приняли участие как фермеры, так и релевантные специалисты страховых компаний, на основании результатов которых предложены необходимые механизмы для внедрения сельскохозяйственного страхования. С целью внедрения агрострахования предлагается укомплектовать действующее в РА правовое законодательное поле с указанием основных положений необходимых законов. Представлено содержание краткосрочной (однолетней) и долгосрочной (десятилетней) программ страхования сельского хозяйства, где этапы внедрения страхования рисков сельского хозяйства обособлены по годам и осуществляемым мероприятиям. Рассчитаны суммы страховых премий, выплачиваемых для страхования урожая зерновых культур с 1 га от града, а также средств, выдаваемых из государственного бюджета при 50 % субсидировании. Дана оценка возможности внедрения индексного страхования в сельском хозяйстве и предложена последовательность этапов его осуществления. Обоснована необходимость создания агростраховой компании, представлен список мероприятий основания предлагаемой организации и разработаны ее основные функции. Основные положения диссертации и полученные результаты изложены в 10 научных статьях.

VOSKANYAN GOHAR

**FORMATION OF INTRODUCTION MECHANISMS OF AGRICULTURAL INSURANCE
SYSTEM BY STATE SUPPORT IN THE RA**

The thesis on competition of an academic degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – “ Economics and Management of Economy and Its Spheres”.

The defence of the thesis will take place on 10 May 2016, at 14.00 o'clock at the 002 Specialized Council in Economics of SCC RA, operating in National Agrarian University of Armenia to the address: 0009, Yerevan, Teryan St., 74.

ABSTRACT

The thesis is dedicated to developing active mechanisms of introducing insurance system in the RA agriculture - the factors of village and agriculture sustainable development.

Agriculture, being one of the most important sectors of the RA economy that have strategic meaning, is the riskiest one. Almost every year the agriculture suffers huge losses, partially, due to the natural disasters (hail, frost, storms, drought, etc) that impede its sustainable development. To mitigate the detriments caused by the adverse impact of natural disasters and minimize the losses, the agricultural risk management is required which is the issue that relates not only to the farmers but also to the society and state in whole. One of the options to solve this issue is introduction of agricultural risk insurance.

The research aims at suggesting science-based management and economic activities, as well as conceptual approaches on introduction of insurance of agricultural risks in the RA which can be applicable under the current social and economic conditions established in the RA. In order to achieve the goal a task has been set up – to study the theoretical, methodological frameworks and specifications of agricultural insurance, traditional and innovation products, the international experience of development of insurance system in agrarian sector, to reveal the risks of agrarian sector and their social – economic impacts in RA, to analyze initiatives of introduction of agro insurance in RA, to study prerequisites and hindering factors for introduction of insurance system in RA agrarian sector, to develop organizational, economic, methodological practical suggestions and state support mechanisms towards introduction of insurance system in RA agriculture.

The research and analysis conducted in the thesis led to a number of results from which the following are considered to be scientific novelties:

- The main provisions of laws and regulations necessary for the investment of state supported agricultural insurance in RA have been developed.
- The necessity of the investment of named peril crop insurance and index insurance in the RA agriculture has been justified and activities for the application of those products has been developed.
- The main directions of state support for the investment of insurance system in the RA agriculture and the structure and functions of the suggested organization assigned for implementing the agricultural insurance have been developed.

The actuality of the research topic, its goal and objectives has been justified in the Introduction. The research object, subject, theoretical, methodological and information bases have been introduced. The main results that are assumed to be the scientific novelty have been formulated and the practical importance of the survey has been suggested.

The economic role of insurance, its functions, the history of agro insurance development, insurance products and their specifics have been presented in the thesis. The international experience both of developed and developing countries in agricultural insurance has been studied highlighting the main forms of state support and its size limits. The advantages and disadvantages of index insurance, as well as its international experience are presented, too. The main natural disasters that are dangerous for RA agricultural sector have been studied and proper insurance products for their management have been given. Within the frames of the thesis topic the test surveys in the form of questionnaire have been conducted involving both the farmers and relevant specialists from insurance companies. As a result of these surveys the proper mechanisms for introducing the agricultural insurance have been suggested. In order to introduce agro insurance there have been suggested to complete current legislation of RA mentioning the general provision of the necessary laws. The contents of short term (1 year) and long term (10 year) agricultural insurance programs have been presented, where agricultural risk insurance introduction stages have been specified by years and by measures.

The size of the insurance premium has been calculated for insuring grain crops per 1 ha against hail risk and also the size of the funds allotted from the state budget in case of 50% subsidy. The feasibility of introducing index insurance in agriculture has been assessed and the succession of its implementation steps has been suggested. The necessity for agro-insurance company establishment has been justified and the list of activities has been presented. The necessity of foundation of Agroinsurance Company has been grounded; the activities for the foundation of the suggested company have been presented and its main functions have been developed. The primary provisions and the results of the study have been published in 10 scientific articles.

